

170 որպէս պախրէք տգէտ եւ յիմարք գոլով՝ ի
մեզս ծնողաց եւ ի նախատինս անձանց :
Վասն որոյ նուազեալ պակասեցաւ եւ ջնջեցան
կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր . եւ
որք կանն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել
175 զնոսա :

Եւ առ այն են բանք իմ , զի նոցա փոքր
տղայքն բուն վարդապետք են եւ գիտեն զգա-
լանանքն հաւատոյ եւ զխոստովանութիւն ա-
մենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդոյ եւ
180 Հոգոյն սրբոյ . այլ եւ զայլ ուսմունս արտա-
քին գրոց հնոց եւ նորոց , զի ԺԵ տարի ,
Ի , ԻԵ ուսանին . եւ ոչ թէ մերձ ծնողաց ,
այլ հեռաբնակ եւ օտար երկիրս :

ԵԶՈՒԻԳԻՔ

Եւ կայ վանք մի մեծ որ ունի հինգ ,
185 վեցհարիւր հարեղայք , զոր Եզուիզ կոչին ,
այս է Եղբայր Յիսուսի , յոյժ նախանձա-
լնդիրք հաւատոց եւ օրինաց , որպէս Եղիայ :
Նոքա բուն փիլիսոփոսք են եւ աստուածա-
բանք . օրն երեք անգամ ժամն քարոզ կու-
190 տան . եւ զպրատունն դաս . միշտ զերկնայինն
խոկան ըստ Պօղոսի եւ ոչ ցանկան աշխարհի
փառաց եւ պերճանաց եւ ոչ մեծութեան , որ
ունայն է , այլ վերին արքայութեան . չունին
եւ ոչ կամին սալթանաթ , որպէս այլազգիքն՝
195 որ ամենեւին մարմին դարձեալ եւ երկրային :